

ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆ ԹԻՒ 885

Վիճակիս Հոգեւոր Հովիւներուն, Թեմական Պատգամատրոններուն
Եւ Ծխական Խորհուրդներու Ատենապետներուն

Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Ուխտի Միաբանական Ընդհանուր
Ժողովը գումարուեցաւ Նոյեմբեր 10-12 օրերուն՝ Պատրիարքարանի դահլիճին
մէջ՝ նախագահութեամբ Երուսաղէմի Առաքելական Աթոռի Պատրիարք Ամեն.
Տ. Թորգոս Արք. Մանուկեանի:

Պատրիարք Սրբազան Հօր հրաւերով՝ մեր թեմին մէջ պաշտօնավարող
միաբաններս ներկայ գտնուեցանք յիշեալ Ընդհանուր Ժողովին:

Ժողովը, որ անցաւ համերաշխ եւ եղբայրական մթնոլորտի մը մէջ,
ներկաներու ստուգումէն, քացման աղօթքէն եւ նախորդ նիստի
ատենագրութեան ընթերցումէն ետք, քննեց զանազան հարցեր, որոնցմէ ոմանք
կը փափաքինք ձեր ուշադրութեան յանձնել:

Լուսարարապետի ընտրութիւն

Տրուած ըլլալով որ նախորդ Լուսարարապետ Գերշ. Տ. Դաւիթ Արք.
Սահակեան հրաժարած էր իր պաշտօնէն եւ միաբանութենէն, ժողովը
մեծամասնութեան քուէով նոր Լուսարարապետ ընտրեց մեր թեմի
հոգեւորականներէն եւ Հիւսթըն Թէքսասի Ս. Գեորգ Եկեղեցւոյ Հոգեւոր Հովի
Հոգշ. Տ. Նուրհան Ծ. Վրդ. Մանուկեանը:

Ընտրութենէն ետք Պատրիարք Սրբազան Հայրը եւ միաբան հայրերը
հանդիսաւոր թափօրով իջան Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարը եւ ուղղուեցան
Ս. Գլխադիրի մատուռը, ուր նորընտիր Լուսարարապետը իր ուխտը կատարելէ
ետք՝ առաւ իր պաշտօնին հետ կապուած տոմարներն ու քանալիները: Ապա
Մայր Տաճարի դասին մէջ Պատրիարք Սրբազան Հայրը արտասանեց
«Պահպանիչ» աղօթքը, որմէ ետք միաբան եղբայրները շնորհաւորեցին
նորընտիր Լուսարարապետը: Միաբանական Ժողովը որոշեց նաեւ
եպիսկոպոսացման համար վկայագիր տալ Տ. Նուրհան Ծ. Վրդ. Մանուկեանին,
եւ խնդրեց Պատրիարք Սրբազան Հօրմէ որ հարկ եղած միջամտութիւնը ընէ
Ամենայն Հայոց Կաթողիկոսի մօտ:

Ընտրութիւն Տնօրէն Ժողովի մէկ անդամի

Նկատի ունենալով որ Տնօրէն Ժողովի անդամ Գերշ. Տ. Յուսիկ Եպս.
Պաղտասեան ներկայացուցած էր իր հրաժարականը յիշեալ պաշտօնէն եւ
միաբանութենէն, ժողովը անոր տեղ ընտրեց Պատրիարքարանի Կրօնական,
Միջ-Եկեղեցական եւ Արտաքին Յարաբերութեան վարիչ Գերշ. Տ. Արիս Եպս.
Ծիրվանեանը:

Պատրիարք Սրբազան Հօր քացման զեկոյցը

Պատրիարք Սրբազան Հայրը տուաւ գրաւոր ընդարձակ զեկոյց մը
հետեւեալ նիւթերուն մասին.

- Միաբանութեան կրօնական եւ հոգեւոր առաքելութիւնը
- Միաբանութեան կրթական առաքելութիւնը
- Միաբանութեան մշակութային առաքելութիւնը

- Ձեռագրաց գանձատուն
 - Եղուարդ եւ Հելէն Մարտիկեան թանգարան
 - Գալուստ Կիլլաէնկեան Մատենադարան
 - Տպարան եւ հրատարակչութիւն
 - Մշակութային յայտագիրներ
- Կալուածական հարցերու հետ կապուած լուսաբանութիւններ եւ վաւերագիրներ

Ընթերցում ՏՃօրէն Ժողովի տեղեկատուութեան

ՏՃօրէն Ժողովի ատենադպիր Հոգ. Տ. Անուշաւան Ծ. Վրդ. Ջղջանեանի կողմէ գրաւոր կերպով ներկայացուեցաւ ՏՃօրէն Ժողովի տեղեկատուութիւնը հետեւեալ միջոցներու մասին.

- Ա. Կրօնական համայնքներու հետ յարաբերութիւն
- Բ. Պետական յարաբերութիւնը
- Գ. Նուիրապետական Աթոռներու հետ յարաբերութիւնը
- Դ. Ժողովներ
- Ե. Վիճակային տեսչութիւնը
 - Յորդանան
 - Կիլլաէնկեան Մատենադարան
 - Թանգարան
 - Տպարան
 - Սրբոց Թարգմանչաց Վարժարան
 - Կալուածական

- Բրիտանի ԵՃճԷնեան 2000 եւ Հայաստան աշխարհի Մէջքիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700 ամեակներու տօնակատարութիւններ

- Կանոնադրութեան բարեփոխում
- Լուսարարապետարան
- Ձեռագրատուն, Ա. Թորոս Եկեղեցի
- Ժառանգաւորաց Վարժարան
- Ելեւստից Դիւան

Տեղին կը գտնենք յիշել որ, վերջին Մէկ տարուան շրջանին, ՏՃօրէն Ժողովի նիստերը կանոնաւոր կերպով կը գումարուին շաբաթը աճգամ մը:

Տեղեկատուութիւն Միաքանական Ուխտի Կանոններու Բարեփոխութեան

Կանոնադրութեան Յանձնախումբը ներկայացուց իր տեղեկագիրը: Ժողովը այս յանձնախումբի նախկին անդամներու թիւին վրայ աւելցուց Գերշ. Տ. Արիս Եպս. Ժիրվանեան եւ նորընտիր Լուսարարապետ Հոգ. Տ. Նորհան Ծ. Վրդ. Մանուկեան: Եանձնախումբը պիտի շարունակէ սկսուած աշխատանքը եւ յաջորդ Միաքանական Ընդհանուր Ժողովին պիտի ներկայացնէ Կանոնադրութեան նախագիծ մը:

Տեղեկատուութիւն Կալուածոց Մատակարարման Մարմնի

Այս Մարմինը, քաղկացած երեք անդամներէ (Տիար Ժան Վարդան՝ Ատենապետ, Տիար Դաւիթ Նաճարեան եւ Տիար Սեպուհ Պոյաճեան), ներկայացուց իր տեղեկագիրը, որուն համաձայն՝ խնդրոյ առարկայ երեք կալուածներէն երկուքին համար նպաստաւոր կարգադրութիւններ եղած են, եւ շուտով երրորդին հարցն ալ պիտի լուծուի: Վանքապատկան կալուածներուն 90%—ի մասին անհրաժեշտ արձանագրութիւնները ատարտած են եւ համակարգիչի վրայ զետեղուած, իսկ 10%—ի արձանագրութիւնները կ'աւարտին շուտով:

Այս տեղեկագրի ամարտին՝ միաբանները հարցումներ ուղղեցին յանձնախումբի անդամներուն, որոնք տուին լրացուցիչ լուսաբանութիւններ:

Ներկայացում ելեւմտից հաշուապահութեան եւ պիտճէի

Գրաւոր կերպով ներկայացուցաւ Պատրիարքարանի ելեւմտից հաշուապահութիւնն ու պիտճէն:

Միաբան Հայրնրուն կողմէ եղան բազմաթիւ հարցումներ, որոնց պատասխանեց եւ անհրաժեշտ լուսաբանութիւնները տուաւ Պատրիարքարանի գլխաւոր հաշուապահը:

1700—ամեակի առիթով ուխտագնացութիւն դէպի Երուսաղէմ եւ Հայաստան

Տեղեկութիւններ տրուեցան Հայաստանի մէջ քրիստոնէական կրօնքի հռչակման 1700—ամեակին առիթով տեղի ունենալիք ուխտագնացութեանց մասին:

Քրիստոսի Եւանջելեան 2000—ամեակի տօնակատարութիւնք

Պատրիարքարանի կողմէ կազմուած է մասնաւոր Յանձնախումբ մը աստեճապետութեամբ Հոգ. Տ. Աւետիս Արղ. Իփրաճեանի եւ Հոգ. Տ. Բագրատ Արղ. Պուրճէքեանի: Կրօնական, Միջ-Եկեղեցական եւ Արտաքին Յարաբերութեամբ վարիչ Գերշ. Տ. Արիս Եպս. Ժիրվանեանի ի պաշտօնէ կը ղեկավարէ Յանձնախումբի աշխատանքները: Յանձնախումբին կ'անդամակցին նաեւ Երուսաղէմի հայ համայնքէն ներկայացուցիչներ: Գերշ. Տ. Արիս Եպս. Ժիրվանեան ժողովին տեղեկացուց որ Երուսաղէմի միւս քրիստոնէայ յարանուանութեանց հետ կը գործակցին 2000—ամեակի տօնակատարութեանց կապակցութեամբ: Պատրիարքարանը այս յիշատակելի թուականը պիտի նշէ 2000 թուականի հայկական Ս. Եւանջելիան՝ Յունուար 18—19—ին՝ համաձայն հին տոմարի:

Միաբանական ժողովը իր որդիական սէրը արտայայտող ճամակ մը ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա.ի՝ մաղթելով Նորին Սրբութեան շուտափոյթ եւ կատարեալ ապաքինում: Իրացուց նաեւ յարգանքի եւ գնահատութեան բանաձեւեր՝ ուղղուած Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր, Տնօրէն ժողովի եւ Միաբանական Ընդհանուր ժողովի դիւանի անդամներուն:

Միաբանական Ընդհանուր ժողովի ամարտին՝ քոլոր ներկայ միաբանները Երիզովի մէջ ճաշի հիւրը եղան Ամեն. Տ. Թորոս Արք. Մանուկեանի:

Զայս կը հաղորդենք առ ի տեղեկութիւն:

Սիրոյ ողջունի
Խաժակ Արք. Պարսամեան
Խաժակ Արք. Պարսամեան
Առաջնորդ